

գիշին և ողջախոհ իրրև գտատրական: Չտէր կուսիտասն ասեմ, զարբիծ վարքն և զն. բարոյս ծաղիկն: Չտէր կուսիտասն ասեմ, զաղբերն գիտութեան և զառոգանողն ծա. բաւելոց: Չտէր կուսիտասն ասեմ, զարդն եկեղեցւոյ և զպարծանքն ուղղափառաց: Չտէր կուսիտասն ասեմ, զաստուածահան. զոյ զմիտն և զանդամանդեա պնդութիւնն:

« Չտէր կուսիտասն ասեմ, զտաճարն Հոգւոյն սրբոյ և զհանգստարանն Քրիստո. սի, զանսփոփոխելի կամբն, որ այնքան սէր աշխարհիս և սէր ընտանեաց և որդւոցն առ թշնչ համարեցաւ, ասելով ըստ ա. ռաքելոյն: Որով աշխարհս ինձ ի խաչ ելեալ է և ես աշխարհի: Ասելովն զօրա. ցեալն էր Հոգւով սրբով, և ժուժկալու. թեամբ յարատեւէր ի սէրն Աստուծոյ. և անխոնարհելի ունէր զմտացն գիտաւորու. թիւն իւր որ առ Աստուած մինչև ցկա. տարած. որով արիարար ժուժկալութեամբ վկայական մահուամբ գլխատեցեալ ի կոս. տանդինուպոլիս, կատարեցաւ ի Քրիստոս, և ի նմանէ պսակեցաւ ի փառս ամենա. մեծի անուան Քրիստոսի Աստուծոյ մերոյ: Որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի, և մաքուր ազօթիւք սորին մեզ և ամենայն հաւատացելոց ողորմեցցի. ամէն »:

Հրարկ. Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ

Միութիւնն ու պարզութիւնը՝ գեղեցկու. թեան երկու հրաշալի աղբիւրներն են:

ՇԽԼԷՐ

Առանձնութիւնը կը զարգացնէ բարձր ոգիները, բայց կը տիրեցնէ միջակները:

ԱՆՍԻԼԼՈՆ

Գիտութիւն առանց խնձի՝ կործանումն է հոգւոյ:

ՌԱԳԸԼԷ

Ամենէն մեծ արժանիքն հոն կ'ունենանք՝ երբ զմեզ բանէ մը կը զրկենք:

ԼԱ ՌՈՇՈՒԳՈՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՆ ԶԵՆԱԳԻՐՆԵՐ

ԼՈՆՏՈՆԻ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԹԱԵԳԱՐԱՆՈՒՄ

(Շար. տես Բզմ. 1923. էջ 101)

Ի վերջ ամենայնի՝ ահա յառաջի ա. ծնեմք Հայկական Հին Զեռագիրների սի. բողաց, սուրբ Աւետարանիս կարի հետա. ճըրճըրական երկու յիշատակարաններն:

Յիշատակարան Առաջին «Փառք անըս. կըզբանն և սկզբանն ամենայնի, անեղին և զոյացուցչին բնաւից անվախճան և ան. սահման էացուցչին, սահմանիչ և կատա. բումն բոլոր էկցս, երիցս միակին, եզա. կի և միում աստուածութեանն: Որ ան. շարժ գոլով՝ շարժէ զարարածս ի կեանս և ի փրկութիւն. էկցս է ակն և կենդա. նեաց կեանք. որ անսփոփոս գոլով միշտ յէութեան, անեզր և անվայրափակն: Լը. բումն և բովանդակիչ ամենայնի: Եւ յա. մենայնս է՝ և յամենայնէ անհաս: Որպէս ի մատունս և ի բոլորս. և ինքն ո՛չ մա. սնն և ո՛չ բոլոր՝ որպէս թէ՛ զմասն և ըզ. բոլոր. զամենայն ինքն ունենալով. և կրէ զամենայն բանիս զօրութեան իւրոյ: Գե. բալիբ գոլով ընու փո՛ւ: Որում բան և իմաստութիւն և լեզու տունալ բոլոր էկց: ի բոլոր էկցս հանցուք զարհնութիւն և զփառս Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ՝ այժմ և մ՛շ:

« Իսկ չորից աւետարանչացն խորհուրդ բազմօրինակ իմն ցուցմամբ տեսանի: Զի ոմանք ասեն, թէ չորից աւետարանչացն են օրինակ՝ չորք անկիւնք արարածոց: Արեւելք, Արեւմուտք, Հիւսիս, Հարաւ: Պարտ էր քարոզել զաւետարանն: Իսկ ո. մանց հաճոյ թուեցաւ ըստ չորից մշտա. հոս գետոցն Յաղենական յաղբերէն յա. ռաջ խաղացեալ, առ ի տիեզերաց առու. գումն: Փիսոն որ նշանակէ զՄատթէոս, և

1. Ինձ յայտնի չէ Բնշ նշանակէ այս կրճատու. թեամբ. թե՛րեւս աշխարհ:

2. Մ. կարծեմ միշտ:

Գեհնո՝ զՄարկոս, Տիգրիս՝ զՂուկաս, և Եփրատէս՝ զՅովաննէս: Եւ սոցին զոլով նմանապէս թուով ուռնացեալք, ի կենդանակալ աղբերէն՝ առգգանել զպատգեալ միտքս մարդկային բնութեանս:

«Նոյն աւրինակ ըստ տեսութեան Եզեկիելի՝ քառակերպեան աթոռոյ, Մարդ՝ որ նշանակէ զՄատթէոս, և Արիւծ՝ զՄարկոս, Եղջ՝ զՂուկաս, և Արծիւ զՅովհաննէս՝ զանմարմնոցն տէր տեսանելով բազմեալ ի փառացն աթոռ՝ իմանալի ցուցմամբ՝ զինամս քոլոր բնութեանս զակն արկուցին: Որ աստուածապէս և տիրարար ներմամբ նշանակէ առ հոգածինս, հրեղինաց անմահից՝ զմահկանացուն առնել հաղորդս: Եւ յեւս զերակատար հանել ի փառս, վասն զի փառաց թագաւորն Քրիստոս՝ փառակից Հաւր և Հոգոյն Սրբոյ՝ զմերս առնելով բնութիւն՝ յինքեան միացոյց աստուածութեան, ուսուցանելով՝ մի որդի դաւանել, որ յԱստուծոյ Հաւրէ, և որ ի Մարեմայ սրբոյ կուսէն՝ անճառ միութեամբ՝ զոր աւետարան ուսուցանեն բանք: Մինչ ի կատարած հաւանութեամբ հաւատալ հաստատ կարգօք ի նոյն յարելով յառաքելականոք քարոզութիւն՝ զաստուածաթոսն վարդապետութիւն որդմեալ՝ ըզսակաւս ի բազմացն՝ առ ի հաւատալ եթէ Յիսուս Քրիստոս և որդի Աստուծոյ. ըստ վեհին Յովհաննէսու հաւատալ, և զկեանքն ընդունել յանուն նորա:

«Աւտակ և տեսեալ զսորայս անճառ փրկագործութեան խորհուրդ հեզահոգի և աստուածասէր խաւջէ վէլիթան և զկողակից Գայանէ որ եռափափագ սիրով, յօժար կամօք և սերտ հաւատքով ցանկացօղ եղև այսմ ծաղկաւէտ և վարդափթիթ կենսաբուխ սուրբ աւետարանիս: Եւ ստացաւ զսա ի յարդար վաստակոց իւրոց, յիշելով զբան մարգարէին որ ապէ, Երանի որ ունիցի զաւակ ի Սիոն, որ է եկեղեցի սուրբ: Վասն այս յուսոյն ետ գրել զտէրունեան աւետարանս առատ տրիւք և զարդարեաց մեծածախ ընչիւք. ի պայծառութիւն սուրբ եկեղեցւոյ և ի վայելուցն մանկանց Սիոնի: Այլ և յի-

շատակ բարի հոգոյ իւրոյ և ծնօղաց իւրոց հաւրն Մախսուղին և մաւր Բանաթին մեծ պապուն Միլրաքին և պապու խաւջայ ջանին և ամենայն արեան մերձաւորաց ամէն:

«Դարձեալ կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք խաւջայ վէլիթանին և իւր կողակցին Գայանին և զստերաց իւրոց Սալումին և Խաթունջանին Հոլպսիմին, Եւ հանգուցեալ որդոյ Յակոբին և քուերոց Խանրէկուն և Թաւրէզին: Դարձեալ յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք Խօջայ վէլիթանին և իւր միւս հա(ն)գուցեալ կողակցին և ամենայն արեան մերձաւորացն աւմէն:

«Արդ՝ որք ճաշակէք յամենառատ սեղանոյս, և վայելէք յաստուածային բուրաստանէս, և հանդիպիք սուրբ աւետարանիս, կարդալով, կամ տեսանելով, կամ օրինակելով յիշխիցի ի սուրբ և ի մաքրափայլ յաւքօքն ձեր առաջի անարիւն զենմանն՝ ի ժամ սոսկալի սուրբ պատառագին, և լի բերանով Աստուած ողորմի ասացէք. և քոլոր հաւատով մեղաց թողութիւն հայցեցէք խաւջայ վէլիթանին և կողակցին Գայանին և ամենայն վերոյ գրելոցս ի սմա. և ողորմածն Աստուած ամենեցուն առհասարակ ողորմեսցի՝ ամէն:

«Եւ արդ՝ ես յետինս ի կարգաւորաց, և անպիտանս և անարժանս ի մանկունս եկեղեցւոյ, բազմամեղս և անխմառս ի գիրս զըշութեան, և յանցաւորս ամենայն պատուիրանացն Աստուծոյ, Ստեփաննոս սուտանուն քահանայ որ անուամբ միայն և ոչ գործով: Շնորհիւ տեսառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զսուրբ աւետարանս ի Շօշ քաղաքն՝ որ թարգմանի Ասպահան. որ ետես Գանիէլ զտեսիլն Թագաւորացն Պարսից, որ զչորրորդ զագուցն զապստամբեալն յԱստուծոյ. ծանուց բարձրեալ զաւրութեամբ Աստուած՝ որդւոյն:

«Արդ ի յետին սառնացեալ ժամանակիս մնացեալ է գերի ամենայն հաւատացեալքս Քրիստոսի ի ձեռն պարսից ան-

զերծանելի: Յիշելով զբանն Ներսէսի՝ որ ասէ. թէ զալ ազգին փոանգաց և նորոգումս լիցի եկեղեցեաց քրիստոնէից և ամենայն հաւատացելոց և փրկէ Տէր Աստուած ըզ-
ժողովուրդ իւր յաշխարհէ արեւելեան՝ և կղզեաց ծովու, և յամենայն տեղիս՝ և մեք սպասեմք զայստեան նորա որպէս զայստեանն Քրիստոսի որ առնէ յարու-
թիւն հողացեալ մարմնոց մերոց:

« Եւ արդ աւարտեցաւ զսուրբ աւետա-
րանս ի մեծ թուականին ՌԵՃ՝, զոր չէ արժան կրկնել անուն՝ տեղւոյս այսորիկ: Ի վարդապետութեան մերումս միջի արի և քաջ րարունապետ Սիմէոն՝ վարդապետի՝ Աստուած զհոգի սորա ընդ երկոտասան վարդապետան դասեացէ, որ քարոզելով զբանն Աստուծոյ միսիթարէ զսգաւոր և զտրտմեալ սիրտս ամենայն քրիստոնէից՝ ի յանօրինաց աշխարհս. և Աստուած զինքն միսիթարեացէ: Ի հայրապետութեան տեսան Միլըիսէթ կաթողիկոսի և Դաւթի՝

ամենայն Հայոց. և ի յառաջնորդութիւն մերոյս վիճակի Մեսրոպ՝ արհեսպիկու-
պոսի: Եւ ի թագաւորութեան իմաստուն Շահ Արասին կարմիր գլխոյ:

« Արդ աղաչեմ զամենեան զման-
կունսդ սուրբ եկեղեցեայ, զի որք հանդի-
պիք ասութեանս սուրբ աւետարանիս՝ զա-
ւելորդն բառնայք և զպակասն ընուր, և խոշորութեան և սխալանացն անմեղադիր լինել զի կար մեր այս էր:

« Վասն որոյ երես ի գետին զնկով աղաչեմ զձեզ զի լի՛ սրտով և բոլոր հա-
ւատքով անարժանիս Աստուած ողորմի ասացէք և մեղաց թողութիւն խնդրեցէք մեզ և ծնողաց մերոց՝ և Աստուած ձեզ ողորմեացի և ձեր մեղքն թողցէ՛ ամէն:

« Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս և Աս-
տուած ողորմի ասացէք անարժան սուտ-
անուն Մեսրոպ զպրիս և ծնողաց իմոց տէր Մարտիրոս քահանային և խոնդքարին. և եղբարք իմոց տէր Թադէոսին և Պար-

1. Տես Ողբ Եղեմեայ: Առցեալ սրբոյ Տեան Ներ-
սէսի Շնորհաւոյ Հայոց կաթողիկոսի: Զատիկին ի
լոյս ընծայեալ զործարութեանս տեսան Բովաննու
վարդապետի Զօրապեան կոստանդնուպոլսեցոյ: Տը-
պագրեալ ի Ժարիգ, 1827. (էջ 83):

Շարժէ կրկին զազնն Ֆրոնտի,
Անուն հեծեալ և հետեակ.

Իբր ըզծովու արեաց կուտակ,
Բորբոքելով զան խիստ և բարկ.

Ափան զեռոց աւելն զունակ,
Կամ զերդ աստեղք երկից ի կարգ.

Լըռու զամէն երկրի յատակ,
Որպէս ըզփն ասրաքատակ.

Հընդին զերդ կողմն կիսիսակ,
Զամբըն վարեն ըզհակառակ.

Մարբեն զաշխարհս բովանդակ,
Զանհաւաքից անուն զատարկ.

Զմահմտական ազգ հասարակ.
Աւունս յաւար և յապաւատակ.

2. ՌԵՃ = 1057 + 551 = 1608. յամի Տեանս:

3. Արքեպ ուրիշ տեղ յիշատակած է որ սուրբ Աւե-
տարանս գրուեցաւ Ալլաւան քաղաքում (միշէրն Նոր
Զուլայի շինութիւնն զիւն չէր աւարտուած): Խիստ
կակժախ մի պարագայ էր իւր համար որ իւր սիրե-
ցեալ Հայաստանէն հեռի գրուեցաւ այս սուրբ գիրքն,

ուստի զփրմակի իւրեանց բռնի որդեգրեալ քաղաքի
անունն վերստին արձանագրել:

4. Նոր Զուլայեցեաց կոչւոր Դովի, մինչև Մեսրոպի
ընտրութիւնն (1606ին), որպէս առաջին առաջնորդ:

5. Երկու կաթողիկոսաց անուանն ի միասին յի-
շել՝ պն պատճառաւ է որ այդ ժամանակամիջոցն
բում սովորութիւն էր բուն կամ ընտրեալ Աթոռակալ
կաթողիկոսաց համար ունել նաև « Ալիպի » կաթու-
ղիկոսը: Դաւիթ Գ. Վարդաշապատցի, բուն կաթողի-
կոսն, նստաւ յովոռն 1587ին և երաւարեցաւ 1629ին:
Այս 42 տարի ակթոռակալութեան միջոցում, Դաւիթ
ունեցաւ որպէս ալիպիք, հետզհետէ: — Միլըիսէթի
Ա. կարենցի (1593), Գրիգոր ԺԳ. կամ Սրապիւն
Եղեմեացի (1603) և Սահակ Գ. կարենցի (1629),
Միլըիսէթի, որ ներուն քաղաքացեալ ևս էր, ընտրեալ
մի պատգամաւորութեան զլուս անցանելով, զմաց Աս-
պահան 1603ին և խոգրից Շահ Աբբաս մեծէն՝ որ զայ
Հայաստան և ազատէ հայերին տանկաց անտանիկ և
կեղեքիշ լուծէն: Օգուտ քաղելով այդ առիթէն, նա մա-
նուանդ որ յազուրդ պիտի տար իւր անանձին բազ-
մանաց, Շահ Աբբաս՝ մեծաւ պատրաստութեամբ մուտ
Հայաստան 1604ին, ի հեռուէս իւր և Սուլթան Մուրա-
դ. Ի (1574 – 1695) մէջ կոնալ խաղաղութեան դաշին
(1585), որով Հայաստան վիճակուած էր Օսմանցիին.
րին: Շահ Աբբաս չարաչար պարտեցաւ ի բերազար-
մին (1605), քսան և կնիզ հազար հայեր բռնի քաշեց
տարաւ Պարսկաստան:

6. Նոր Զուլայի առաջին առաջնորդ (1606 – 1613):

սամին և քուերց իմոց Աննային և Դեղ-
ժուհին և ամենայն արեան մեթաւորաց
իմոց. Աստուած ողորմի ասացէք անար-
ժան Մեարուպիս որ ծաղկեցի գեղեցիկ դե-
ղով ոսկով և լազուարդով և ազգի ազգի
գունով յիշատակ բարի »:

Յիշատակարան Երկրորդ. « Դարձեալ
յիշեցէք ի Քրիստոս, Աստուած ողորմի ա-
սացէք տէր Յոհաննէսին, իւր զուտոր Սօ-
վինին, ի նորապսակ Արն Սովինի Մանու-
կին, որ առ Աստուած փոխեցաւ ի հան-
գիստ արքայութեանն իւր անգրաւ յաւիտե-
անն ի փառս՝ ի Պաղտատ, ամի Տեառն 1631
Մարտի 23ին: Յիշատակս տվաւ սուրբ
աւետ(ար)անս ի երկիրն Ղարայղան՝ ի
գիւղն Չանախչի ի նորաշէն սուրբ ամե-
նափրկչին ի ձեռամբն անարժան և քա-
հանայ տէր Յոհաննէսին Համարաձումեան.
վասն որոյ երես անկեալ աղաչեմ զձեզ
զի լիայսրտիւ և բոլոր հաւատքով կար-
դալով հանդիպելով յիշեցէք տէր Յոհան-
նէս և զնորափեսայն իւր Մանուկ մահ-
տէսի Ընաֆէլեան ևս ամուսին իւր Սովին
հայր մեր և ողորմի ասացէք և յիշեցէ(ք)
և դուք յիշեալ լինջիք առաջի Քրիստոսի
Աստուծոյ մերոյ ամէն »:

Ս. ՏԵՐ Մ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

1. Ղայրաղան կամ Ղարաղան կազմէ Պարսկաստա-
նի ենթազատաւոց մին, ի մէջ Ղում և Համաղան քա-
ղաքաց:

ՀՍԿԱՅ ՕԳԱՆԱԻ ՄԸ

Ամերիկայի մէջ սկսած են շինել հսկայ օդա-
նաւ մը՝ մէջը պարտէզով: Օդանաւը որ 1600
ձիու զօրութեամբ երկու շարժիչ մեքենաներով
պիտի ըլլայ՝ բաց ի ամէն տեսակ դիւրութիւն-
ներէ՝ պիտի ունենայ իւր բարձրագոյն մասին մէջ
հարիւր մեղրի երկայնութեամբ սարահարթ հո-
ղաբլուր մը. սա ծածկուած պիտի ըլլայ տուն-
կերով ու ծաղիկներով: Օդային դաշտը հաղոր-
դակցութեան մէջ պիտի դրուի ուղեւորներու յար-
կաբաժինին հետ՝ եղբարական վերելեակով մը
(ascensore):

ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ԶԵՌԱԳԻՐՔ Ս. ՂԱԶԱՐՈՒ ՎԱՆՔԻՆ

ԳՐԻԳՈՐԻ ՆԻՒՍԱՅԻՈՑ

ԶԱՂԱԳՍ ԲՆՈՒԹԵԱՆ ՄԱՐԴՈՑՆ

(Շար. տես Բազմ. էջ 104)

ԵՐԿՐՈՐԳ ՕՐԻՆԱԿԸ, որ առաջինին պէս
ամբողջ է՝ տեղեկ կազմով ու քայքայուած
ձեռագիր մ'է. կը կրէ (56 Ա. Դ.) թուա-
համարը, ունի 20 հր.մեղր երկայնու-
թիւն, 15 հր.մեղր լայնութիւն, և Յ, 5
հր.մեղր թանձրութիւն: Առաջին մասը՝
այսինքն Գր. Նիւսացիի գործին թարգ-
մանութիւնը կը բաղկանայ 225 էջէ, իսկ
երկրորդ մասը՝ Բարսղի թարգմանութիւնը՝
նոր իշագրութեամբ 237 էջէ, որով ձե-
ռագիրը ընդ ամէնը կը պարունակէ 462
էջ գրութիւն, ունենալով 231 թերթ:

Թուղթը բամբակեայ է. գիրը ԲՈՂՈՐ,
բարեխախտաբար գեղեցիկ և ընթեռնի:

Ունի երեք Յիշատակարան, որոնց մէկը
կը վերաբերի թարգմանութեան ժամանա-
կին, և յար և նման է Առաջին Որինա-
կին ունեցածին, միայն թէ այս ձեռագրին
մէջ կը գտնուի Բարսղի երկին վախճանը,
վերջն ալ յաւելուածով մը, որ է.

« Ընդ նստին և գլետնեայս ի քոյր քա-
« ղեաց գործաւնորանց գտրին զծոյ գլխ-
« սի ի որ յազում ամօք ծառայեցի զրոյն և
« ի յոգին ոչ ժամանեցի. աղաչեմ յիշել ի
« տեք ո՛ր քարեմիտ պատահողք սմին, ևս
« և զաշակերտն իմ զԳրիգորն և որ առատն
« է յամենայնի, յիշողացդ և յիշեցերցս ու
« զորմեցի... և այլն »:

Յիշուած Բասիլը Բարսղ Նիւսացին է
և Գրիգորն » ալ՝ անոր եղբայրը՝ Գր.
Նիւսացին:

*

Միւս երկու Յիշատակարանները Գրը-
շութեան կը վերաբերին. առաջինը կը